

28.03.2024

Ծանուցում <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության սպառողներ (դիմող անձինք)
ՌՈՉԱ ԱԼԲԵՐՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ (ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՎԵՐ՝ № 83208111, № 0542882 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ)

Հայտատու՝ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.12.2019 թվականի թիվ 523-Ն որոշմամբ հաստատված կանոնների 8-րդ կետ

Ձեր կողմից <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերությանը ներկայացված սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման հայտի հիման վրա <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության և Ձեր միջև կնքվել է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ սպառողը միացման վճարի 50 տոկոսը (Կառուցապատողի դեպքում՝ միացման վճարը) սույն պայմանագրի կնքման պահից 10 օրվա ընթացքում փոխանցում է Բաշխողի՝ սույն պայմանագրի վավերապայմաններում նշված միացման վճարի համար նախատեսված բանկային հաշվին:

Պայմանագրով սահմանված կարգավորումների համաձայն՝ Պայմանագիրը լուծվում է Բաշխողի կողմից միակողմանի Սպառողի կողմից կանխավճարը (Կառուցապատողի դեպքում՝ միացման վճարը)

Պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում:

Ընդ որում պայմանագիրը համարվում է լուծված համապատասխանաբար կանխավճարի (Կառուցապատողի դեպքում՝ միացման վճարի) վճարման ժամկետի ավարտի օրվան հաջորդող օրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Ձեր կողմից չի կատարվել կանխավճարի (Կառուցապատողի դեպքում՝ միացման վճարի) վճարման պարտավորությունը՝ Պայմանագիրը համարվում է լուծված և Ձեր կողմից Ընկերությանը Պայմանագրի շրջանակներում կատարված կանխավճարը ենթակա է վերադարձման:

Առաջարկվում է Ընկերությանը տրամադրել Ձեր անվամբ բանկում բացված հաշվեհամարի տվյալները (հաշվեհամար, բանկ), որպեսզի Ընկերության կողմից Ձեզ վերադարձվի կատարված վճարումը:

Ձեր անվամբ գործող բանկային հաշվեհամարի բացակայության պարագայում անհրաժեշտ է Ընկերությանը հետադարձ գրությամբ ներկայացնել համաձայնությունն առ այն, որ Ընկերությունը վերադարձման ենթակա գումարը իրավասու է փոխանցել <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ում գործող 247002214564000 տարանցիկ հաշվեհամարին և Դուք անձնագրի ներկայացման միջոցով կարող եք ստանալ կատարված կանխավճարը:

Հասցե՝ ք. Երևան, Նորք Մարաշ, Ա. Արմենակյան 127

Հեռ.՝ +374-10-650086

Վեբ կայք՝ <https://www.ena.am/>

Էլ. փոստ՝ office@ena.am